




## Փախստականի որոշակի ժամկետով բնակության իրավունք. ինչ է նշանակում սա ձեր համար

Դուք ստացել եք փախստականի որոշակի ժամկետով բնակության իրավունք: Այս մասին գրված է այն որոշման մեջ, որը դուք ստացել եք Նեդերլանդների և հպատակության ծառայության (IND) կողմից: Ստանալով բնակության իրավունք դուք ստանում եք իրավունքներ և պարտականություններ: Այս բրոշյուրի մեջ գրված է այդ իրավունքների և պարտականությունների մասին:

### Փախստականի իրավունք որոշակի ժամկետով բնակության վերաբերյալ

Ձեր ստացած բնակության իրավունքի քարտով կարող եք.

- ցույց տալ, որ դուք իրավունք ունեք ապրել Նեդերլանդներում;
- հաստատել ձեր ինքնությունը: Բնակության իրավունքի փաստաթուղթը ձեր անձը հաստատող փաստաթուղթն է: Որոշակի ժամկետով բնակության իրավունքը համարվում է վավեր: Ստուգեք ձեր բնակության իրավունքի փաստաթղթի վրա նշված տվյալները: Այս բրոշյուրի ներքևում գրված է, թե սխալների դեպքում ինչ պետք է անել:



### Բնակության իրավունքի քարտի վրա նշված ձեր անձնական տվյալները

Ձեր բնակության իրավունքի քարտի առջևի մասում նշված է.

- 1 Անուն ազգանուն. ձեր անուն ազգանունը
- 2 Վերջնաժամկետը. որ ձեր բնակության իրավունքը տրված է մինչև այսինչ օրը
- 3 Փաստաթղթի տրման ամսաթիվն ու վայրը. երբ և որտեղ է տրվել փաստաթուղթը
- 4 Փաստաթղթի տեսակը. III թիվը նշանակում է՝ փախստականի բնակության իրավունք որոշակի ժամկետով:
- 5 Հատուկ նշումներ. ձեր բնակության իրավունքների մասին:

Փաստաթղթի հետևի մասում նշված են հետևյալ տվյալները.

- 6 Ծննդյան ամիս ամսաթիվը, քաղաքացիությունը և սեռը
- 7 Հատուկ նշումների. Աշխատանքի իրավունք:  
Ձեր բնակության իրավունքը վկայում է Նեդերլանդներում աշխատելու ձեր իրավունքի մասին:
- 8 Բնակության իրավունքի տրման առաջին օրը. Այն օրը, որ օրվանից որ դուք Նեդերլանդներում ստացել եք բնակության իրավունք:

9 V-համար: ձեր 10 թվանոց V-համարը գրված է ձեր բնակության իրավունքի քարտի ներքևի մասում: Այդ համարը գրված է VNR տառերից հետո: Այն գրված է նաև Ներգաղթի և հպատակության ծառայությունից (IND) ստացած նամակում:

### Ինչ պետք է անեք

- Դուք կարող եք ստանալ ձեր բնակության իրավունքի քարտը՝ հանձնելով ձեր՝ Օտարականի անձը հաստատող քարտը (W-document): Երբեմն ուղարկում են բնակության իրավունքի որոշումը: Եթե դուք այն դեռ չեք ստացել, ապա մի քանի շաբաթվա ընթացքում կստանաք մի նամակ Ներգաղթի և հպատակության ծառայությունից (IND), որում գրված կլինի, թե երբ և IND-ի որ բաժնից պետք է ստանաք ձեր բնակության իրավունքի փաստաթուղթը: Դուք կարող եք ստանալ ձեր բնակության իրավունքի քարտը՝ հանձնելով ձեր՝ Օտարականի անձը հաստատող փաստաթուղթը /քարտը (W-document):
- Գրանցվեք ձեր բնակավայրի քաղաքապետարանում: Դուք պարտավոր եք գրանցվել Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակում (BRP), որտեղ պահվում են Նեդերլանդներում բնակվող յուրաքանչյուր քաղաքացու անձին վերաբերող տվյալները: Երբեմն քաղաքապետարանը կատարում է քաղաքացու գրանցումը՝ բնակության իրավունքի մասին որոշման նամակն ստանալուց հետո: Եթե դուք մինչև հիմա չեք գրանցվել, ապա կարող եք կապ հաստատել քաղաքապետարանի հետ: Ստուգիր անուն ազգանունը, ծննդանդամիս ամսաթիվը ճիշտ է գրանցված, թե ոչ: Ներկայացրեք հնարավորին չափ շատ փաստաթղթեր, այսպես օրինակ՝ ծննդյան և ամուսնության վկայական, անձը հաստատող փաստաթուղթ: Գրանցվելուց հետո կստանաք Սոցիալական համար (BSN): Դա անձի մի առանձնակի համար է, որը տվում է յուրաքանչյուրին, որն էլ գրանցված է Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակում (BRP): Սոցիալական համարն (BSN) անհրաժեշտ է երկրի կառավարության հետ կապված ցանկացած հարցերի դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ BRP օր BSN-ի վերաբերյալ [www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl) կայքերը կամ զանգահարեք 1400 հեռախոսահամարով: Եթե դուք արդեն գրանցված եք Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակում (BRP) և ուզում եք փոխել ձեր բնակավայրը, ապա այդ մասին պետք է տեղեկացնեք ձեր քաղաքապետարանին: Քաղաքապետարանն էլ ձեր նոր հասցեն կգրանցի Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակում (BRP):
- Բնակության իրավունքի քարտը միշտ պահեք ձեր մոտ, քանի որ այն նույնպես անձը հաստատող փաստաթուղթ է: Նեդերլանդներում 14 տարեկան և ավել անձիք պարտավոր են փաստաթղթով հաստատել իրենց անձն ու ինքնությունը: Սա էլ նշանակում է, որ դուք ստուգումների դեպքում պարտավոր եք ձեր բնակության իրավունքի քարտը ցույց տալ ոստիկանությանը և հսկիչներին: Չներկայացման դեպքում տրվում է դրամական պատիժ:
- Ապահովագրեք ձեր առողջությունը: Ըստ օրենքի հիմնական (*basisverzekering*) ապահովագրությունը պարտադիր է, ըստ որի վճարվում են տնային բժշկի, հիվանդանոցի և դեղատան ծախսերը: Հիմնական (*basisverzekering*) ապահովագրական ընկերությունը կարող եք ինքներդ ընտրել: Եթե ունեք առողջության ապահովագրություն, ապա կարող եք գրվել տնային բժշկի և ատամնաբուժի մոտ: Անհտաժեշտության դեպքում տնային բժշկի կողմից կստանաք ուղեգիր՝ հիվանդանոց գնալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ [www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl) կայքը կամ զանգահարեք 1400 հեռախոսահամարով:
- Ինտեգրում: Ըստ օրենքի դուք Նեդերլանդներում պետք է ինտեգրվեք: Սա նշանակում է, որ դուք պետք է սովորեք հոլանդերեն լեզուն և ծանոթանաք Նեդերլանդների հասարակության համատեղ կյանքին: Այս մասին կստանաք մի նամակ Գրթության իրականացման ծառայությունից (DUO): Դուք ինքներդ եք պարտավոր կազմակերպել ձեր ինտեգրման հարցն այս երկրում: Այն կապված է որոշակի ծախսերի հետ: Ինտեգրման վերաբերյալ քննություններն անցնելուց հետո միայն կհամարվեք ինտեգրված: Ինտեգրման դասերին չմասնակցելու դեպքում Գրթության իրականացման ծառայության (DUO) կողմից կսահմանվի դրամական պատիժ: Եթե դուք 18 տարեկան ից փոքր եք կամ ունեք թոշակառուի տարիք, ապա կարող եք ազատվել ինտեգրման պարտականությունից: Այդ դեպքում կարիք չկա մասնակցել ինտեգրման դասընթացների: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ [www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl) կայքը կամ զանգահարեք

### Ինչ պետք է անեք

- Ապաստանի իրավունք ստանալու դեպքում իրավունք ունեք դիմել ձեր ընտանիքի վերամիավորման համար: Արտերկրում ապրող ձեր ընտանիքի անդամները կարող են մի հատուկ պայմանով գալ Նեդերլանդներ: Այդ պայմաններից մեկը կայանում է նրանում, որ այդ գործընթացը պետք է սկիզբ դրվի ժամանակին՝ բնակության իրավունք ստանալուց երեք ամիս անցնելուց հետո: Սա վերաբերում է նաև ձեր ընտանիքի այն անդամներին, որոնց գտնման տեղի մասին դեռ տեղյակ չեք: Այս գործընթացի համար պետք է դիմեք ձեր ընտանիքի անդամների համար ժամանակավոր բնակության թույլտվության իրավունք (MNV) ստանալու համար, որն էլ անվճար է: Այն վիզայի մի տեսակ է՝ առնվազն երեք ամսով բնակվելու իրավունքի համար: Այս մասին կարող եք դիմել Նեդերլանդներում՝ օգտագործելով հետևյալ (digitale) հարցաթերթիկը. «Ժամանակավոր բնակության համար թույլտվության դիմում»՝ ապաստանի իրավունք ունեցող անձի կողմից: Այդ հարցաթերթիկը կարող եք գտնել [www.ind.nl](http://www.ind.nl) կայքում: Հարցերի դեպքում կարող եք դիմել Նեդերլանդների փախստականների օգնության բաժնի (VVD) աշխատակիցներին: Այս հարցով կարող են նաև ձեր ընտանիքի անդամները դիմել օտար երկրում գործող Հոլանդիական դեսպանատանը: *Ուշադրություն*՝ եթե ձեր դիմումի ժամկետն (3 ամիս) անցել է, ապա դուք ուշացման պատճառով այլևս չեք կարող դիմել ձեր ընտանիքի վերակազմավորման համար՝ ելնելով ձեր ապաստանի դիմումի հիմքերից: Դուք կարող եք ուղղակի դիմել ընտանիքի վերակազմավորման համար, որն էլ անվճար է: Այս դեպքում կան խիստ նախապայմաններ՝ ի տարբերություն ընտանիքի վերակազմավորման համար դիմումի՝ ելնելով ապաստանի դիմումի հիմքերից: Տվյալ դեպքում պետք է ունենաք բավարար աշխատավարձ ձեր ընտանիքի անդամներին պահելու համար: Այս գործընթացի համար պետք է օգտվեք [www.ind.nl](http://www.ind.nl) կայքում եղած «Դիմում հարազատի և ընտանիքի անդամի բնակության նպատակի համար» հարցաթերթիկից: *Ուշադրություն*՝ եթե դուք որպես ընտանիքի անդամ ստացել եք ապաստանի իրավունք, ապա այս դեպքում իրավունք չունեք դիմել ընտանիքի վերակազմավորման համար: Դուք կարող եք ուղղակի դիմել ընտանիքի վերակազմավորման համար: Զեր գործատուն տվյալ դեպքում Աշխատանքի Ընդունման Իրավունքի փաստաթղթի (TWV) կարիք չունի: Դուք պետք է բացեք ձեր հաշվեհամարը: Ցանկացած բանկում կարող եք բացել հաշվեհամար: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Աշխատանքի ապահովման իրականացման վերադաս բաժնին (UWV): Տես՝ [www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl) կայքը կամ զանգահարեք UWV բաժնի 0900 9294 հեռախոսահամարով:
- Դուք կարող եք փնտրել բնակտարածություն: Այս հարցում ձեզ կարող է օգնել Փախստականների կենտրոնացման բաժինը (COA): Բնակարան ստանալու դեպքում պետք է լքեք ապաստանի կենտրոնի կացարանը:
- Դուք կարող եք ճամբորդել արտերկիր՝ արձակուրդ կամ գործնական ճամբորդության, եթե ունեք բնակության իրավունք: Դրա համար դուք և ձեր երեխաները պետք է ունենաք ուժի մեջ գտնվող անձնագիր: Անձնագիր չունենալու դեպքում կարող եք դիմել քաղաքապետարանին՝ փախստականի անձնագիր ստանալու համար, որն էլ վճարովի է: Փախստականի անձնագրի համար դիմելուց մի քանի օր հետո կարող եք այն ստանալ: Որոշ երկրներ գնալու համար ձեր անձնագրի հետ միասին պետք է դիմեք վիզա ստանալու համար: *Ուշադրություն*՝ ձեր Փախստականի անձնագրով չեք կարող գնալ հայրենիք: Փախստականի անձնագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր քաղաքապետարանին: Երկարաժամկետ արտերկիր գնալու դեպքում դիմեք IND բաժնին տեղեկանալու, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ այն ձեր բնակության իրավունքի վրա: IND բաժնից նաև կտեղեկացնեն, թե դուք արտերկիր գնալուց առաջ և վերադառնալուց հետո պետք է տեղեկացնեք Օտարականների ոստիկանությանը (AVIM), թե ոչ:

### **Դիմում ապաստանի ժամանակավոր իրավունքի ժամկետի երկարացման համար**

Ձեր բնակության իրավունքի քարտի վրա նշված է փաստաթղթի վավերացման ժամկետը: Այն ժամանակին վավերացնելը կարևոր է: Այսինքն դիմել մինչև ձեր բնակության իրավունքի ավարտը: Դուք կարող եք նաև դիմել ապաստանի անժամկետ իրավունքի համար: Այս հարցով կարող եք դիմել, երբ որ, համարյա թե, իր ավարտին հասնի ժամանակավոր բնակության ձեր իրավունքը: Ժամանակավոր կամ անժամկետ բնակության իրավունքի համար կարող եք օգտագործել « Ժամանակավոր բնակության իրավունքի թույլտվության» և «Անժամկետ բնակության իրավունքի թույլտվության» դիմումի ձևերը/հարցաթերթիկները կամ էլ դիմեք երկարաժամկետ բնակվողի՝ Եվրոմիության- բնակության իրավունքի թույլտվություն ստանալու համար: Այդ հարցաթերթիկը կարող եք գտնել [www.ind.nl](http://www.ind.nl) կայքում: Դուք պետք է դիմեք՝ քանի դեռ ձեր բնակության իրավունքը դուժի մեջ է: Լավագույն դեպքում կարող եք դիմել փաստաթղթի վավերացման ժամկետի ավարտից 4 շաբաթ առաջ: Ձեր բնակության ժամանակավոր կամ անժամկետ իրավունքի դիմումը ժամանակին ներկայացնելու հարցում դուք եք պատասխանատու:

### **Վերջնական վերադարձ դեպի ձեր երկիր**

Դեպի ձեր երկիր վերջնական վերադարձի համար կարող եք դիմել Նեդերլանդների Միգրացիայի բաժնին (NMI): Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ [www.nmigraatie.nl](http://www.nmigraatie.nl) կայքը կամ զանգահարեք 030 236 42 45 հեռախոսահամարով:

### **Կորուստ, գողություն, վնաս կամ սխալ տվյալներ**

- Եթե ձեր բնակության իրավունքի փաստաթուղթը կորել է կամ գողացել են, ապա դուք առաջին հերթին պետք է ոստիկանություն հայտարարություն տաք, որի համար պետք է ունենաք ձեր v-համարը: Այն գրված է IND-ի կողմից ձեր ստացած նամակների վրա: Ոստիկանությունից կստանաք ոստիկանության կազմած գործընթացի մասին զեկուցագրի վավերացված մի պատճե: Բնակության իրավունքի ստացման համար դուք պետք է IND բաժնի ուղարկեք ոստիկանության կազմած գործընթացի մասին զեկուցագրի մեկ պատճե:
- Եթե ձեր բնակության իրավունքի փաստաթուղթը շատ է վնասված, ապա այն, որպես անձը հաստատող գործող փաստաթուղթ, այլևս չէք կարող օգտագործել: Այդ դեպքում պետք է դիմեք IND բաժնին՝ փոխարինող փաստաթուղթ ստանալու համար: Ձեր անձը հաստատող վնասված փաստաթղթի երկու կողմերի պատճեն պետք է ուղարկեք IND բաժնի: Նոր փաստաթուղթը ստանալիս պետք է հանձնեք ձեր վնասված փաստաթուղթը:
- Գրանցված սխալ տվյալների դեպքում պետք է առաջին հերթին դիմեք ձեր քաղաքապետարանի Քաղաքացիների գրանցման բաժնին (BRP): Նրանք կստուգեն, թե արդյոք ձեր անձին վերաբերող տվյալներն այդ բաժնում (BRP) ճիշտ են գրանցված, թե ոչ:
- Միայն գրանցման դեպքում այն առաջին հերթին կփոխեն BRP բաժնում, որից հետո կարող եք դիմել IND բաժնին՝ բնակության իրավունքի ձեր նոր փաստաթուղթի ստանալու համար: Փոխարինող փաստաթղթի համար IND բաժնին կարող եք դիմել «Դիմում փոխարինող օտարականի նոր փաստաթուղթ ստանալու համար» հարցաթերթիկ ներկայացնելու միջոցով/ [www.ind.nl](http://www.ind.nl) կայք: Նոր փաստաթուղթ ստանալու համար պետք է վճարեք: Նոր փաստաթուղթ ստանալու համար գումարը պետք է վճարեք փաստաթուղթ ստանալու օրը :

**Հարցեր ունենալու դեպքում**

Այցելելք IND-ի կայք՝ [www.ind.nl](http://www.ind.nl) կամ զանգահարեք ընդհանուր հեռախոսահամարով 088 043 04 30: IND բաժնի աշխատանքային ժամերն են երմուշարթի օրվանից մինչև ուրբաթ ժամը 09.00 մինչև 17.00: Արտերկրից կարող եք զանգահարել +31 88 043 04 30 հեռախոսահամարով:

*Հրատարակվել է.*

*Անվտանգության և արդարադատության նախարարության Ներգաղթի և քաղաքացիական ինտեգրման ծառայության հանձնարարությամբ, IND [www.ind.nl](http://www.ind.nl):*

*Դուք ոչ մի իրավունք չեք կարող վերապահել՝ կապված այս հրատարակման բովանդակության հետ: Եթե թարգմանությունը հանգեցնում է մտքի մեկնաբանման հետ կապված տարբերությունների, ապա կարող եք առաջնորդվել հոլանդերեն լեզվով գրված տարբերակով: Այս հրատարակման տեքստը կարելի է օգտագործել որպես տեղեկատվական աղբյուր:*